Հավելված
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2019թ. հուլիսի 18-ի թիվ 480-Լ հրամանի
Ձև

**ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼՈՒՑ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՀԵՏՈ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎՈՂ**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 26/2022/ԿՈՒՎ4/Ա**

ք. Երևան — 11/01/2022

1. **Տիգրան Մարգարյան** ՀՎՀՀ **23182123**
(հարկային իրավախախտումը կատարած անձի անունը, ազգանունը)

2. **Երևան, Էրեբունի, Նոր Արեշ 15 փող 23**
(բնակության (գտնվելու վայրի) հասցեն)

3. **AP0673526**
(ֆիզիկական անձի անձնագրային տվյալները և/կամ/ հանրային ծառայությունների համարանիշը)

**4. Հարկային իրավախախտումների նկարագրությունը, ժամանակահատվածը, ձեռքբերված տեղեկությունները և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն պահպանվել**

ՀՀ ՊԵԿ մաքսային մարմինների կողմից ստացված տեղեկությունների համաձայն՝ Ձեր կողմից **24.10.2021թ.** ԵԱՏՄ պետություններից ՀՀ տարածք է ներմուծվել **2012թ.** թողարկման տարեթիվ ունեցող **ԱՏԳ ԱԱ 8703** ծածկագրին դասվող՝ **1,300,000 ռուսական ռուբլի** (համարժեք 8,775,000 ՀՀ դրամ) ինվոյսային արժեքով տրանսպորտային միջոց(ներ): ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 179-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ԵՏՄ անդամ պետություններից ՀՀ ներմուծվող՝ օրենսգրքի 171-րդ հոդվածում նշված՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող՝ ԵՏՄ ապրանքի կաrգավիճակ ունեցող ապրանքների համար պետական բյուջե վճարման ենթակա բնապահպանական հարկը հաշվարկվում է այդ ապրանքների հարկման բազայի նկատմամբ՝ նույն հոդվածով ՀՀ ներմուծվող ապրանքների համար սահմանված համապատասխան դրույքաչափերով: Հետևաբար՝ վերը նշված տրանսպորտային միջոց(ներ)ի մասով պարտավոր էիք Օրենսգրքի 77-րդ հոդվածի համաձայն՝ հարկային մարմին ներկայացնել ներմուծման հարկային հայտարարագիր ու վճարել արդյունքում առաջացող բնապահպանական հարկը՝ մինչև տրանսպորտային միջոց(ներ)ի ՀՀ տարածք փաստացի ներմուծելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

**5. Ձեռքբերված տեղեկությունների սահմաններում պարտավորության նախնական հաշվարկը և պատասխանատվության կիրառման իրավական հիմքերը**

Ֆիզիկական անձի կողմից **24.10.2021թ.** իրականացված ներմուծման գործարքի մասով ներմուծման հարկային հայտարարագիր չի ներկայացվել և չի վճարվել ներմուծման բնապահպանական հարկի գումարը, նման պայմաններում հարկային պարտավորությունների հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

Օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ԵՏՄ անդամ պետություններից ՀՀ ներմուծվող՝ օրենսգրքի 171-րդ հոդվածում նշված՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների՝ համար, մասնավորապես **8703 ԱՏԳ ԱԱ** ծածկագրին դասվող **5 տարուց ավելի մինչև 10 տարի ներառյալ** թողարկման տարեթիվ ունեցող ավտոմեքենաների համար պետական բյուջե վճարման ենթակա ներմուծման բնապահպանական հարկը հաշվարկվում է այդ ապրանքների հարկման բազայի նկատմամբ՝ **2 տոկոս** դրույքաչափով՝ **175,500 ՀՀ** դրամ [1,300,000 x 2% x 6,75 /փոխարժեք/]:

Օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն, հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով՝ **3,650** ՀՀ դրամ (11/01/2022թ. դրությամբ) [175,500 x 52օր x 0.04%]:

Այսպիՙսով, ֆիզիկական անձի կողմից չկատարած հարկային պարտավորությունների գումարը (11/01/2022թ. դրությամբ) կազմում է՝ **179,150 ՀՀ** դրամ [175,500 + 3,650]:

Հարկային պարտավորությունները հաշվարկվել են 11/01/2022 թվականի դրությամբ և ենթակա են վերահաշվարկման լրացուցիչ նյութերի ու փաստարկների առկայության և ներկայացման դեպքում:

**6.Սույն արձանագրությանը կցվում են անբաժանելի մասը հանդիսացող**

**7.Ընդամենը**

**8.Արձանագրությունը կազմած հարկային մարմնի պաշտոնատար անձի անունը, ազգանունը, ստորագրությունը**

ՀՀ ՊԵԿ ՀՏՌՎ վարչության ԿՈՒՎ թիվ 4 բաժնի ավագ հարկային տեսուչ Լիլիթ Բաբայան